ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/134

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցում, համակարգչային պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերում:

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ղազարյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.08.2019թ. թիվ 26/26-1/13375-2019 գրությամբ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 01.08.2019թ. թիվ 12/3066 գրության հիման վրա, 12.08.2019թ.-ին «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 12.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 16.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 16.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.09.2019թ.-ին:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 01.08.2019թ. թիվ 12/3066 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել է թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏԱևԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 13.08.2019թ.-ին գրությամբ դիմել է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2019թ. թիվ 26/26-1/13375-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով թիվ ՀՀ ԱԱԾ-ՏԱԱԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ի թիվս այլ ընկերությունների մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը 15-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որի վերաբերյալ կայացված որոշումը արձանագրված է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2019թ տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ մասի 6.1.12 կետով:

Հրավերով սահմանված պահանջների համաձայն Ընկերությանը առաջարկվել է ներկայացնել առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը, որը ներկայացվել է հավերով սահմանված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2019թ տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին մասի 1.2 կետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում՝ մասնավորապես «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև 6 և 6.1 հավելվածների տեքստերում սխալ են նշված ծածկագրերը, ինչի հիման վրա հանձնաժողովի նիստը կասեցվել է Ընկերությանը առաջարկվել է շտկել անհամապատասխանությունները:

Ընկերության կողմից 6 և 6.1 հավելվածների տեքստերում սխալ նշված ծածկագրերը շտկվել և հանձնաժողովին է ներկայացվել սահմանված ժամկետներում:

Ընկերության կողմից առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» չափ որոշիչները չեն փոխարինվել, քանի որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերում առկա չեն սարքի լարմանը վերաբերող հստակ պահանջներ:

Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև.

Լազերային տպիչ, HP/Samsung Xpress SL-M2020, կամ համարժեքը Նախատեսված սև-սպիտակ տպագրության համար:

Նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար:

Տպելու արագություն՝ առնվազն 20 էջ/րոպե:

տպելու որակը բոլոր ռեժիմներում ոչ պակաս 1200x1200 dpi

Հիշողություն՝ 8 ՄԲ:

Թղթի փոխանցումը՝ 150 թերթի սկուտեղ:

Թղթի խտությունը՝ 60-163 գ/քառ. մ

Մալուխ USB 2.0 A-B, Երաշխիքային ժամկետը առնվազն 365 օր:

Ընթացակարգի հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է, որպես հիմք նշելով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, որի վերաբերյալ կայացված որոշումը արձանագրված է գնահատող հանձնաժողովի 25.07.2019թ տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին մասի 1.1 կետի 1.1.1 ենթակետով:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթները, Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի շրջանակներում չի կատարել այնպիսի գործողություններ, որի հետևանքով կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2019/134 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

21.05.2019թ.-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար համակարգչային պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն:

Մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ,

Մասնակիցը հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չաւիաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Ինչպես նաև Մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.07.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող ապրանքների ամբողջական նկարագրի հիմնավորող փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» չի համապատասխանում հրավերով սահմանված

պահանջներին, ինչպես նաև 6 և 6.1 հավելվածների տեքստերում սխալ են նշված ծածկագրերը:

Գնահատող հանձնաժողովի 23.07.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության հիման վրա, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված արձանագրված անհամապատասխանությունը:

24.07.2019թ.-ին Մասնակցի կողմից (սահմանված ժամկետում) ներկայացվել է շտկված 6 և 6.1 հավելվածները:

Գնահատող հանձնաժողովի 25.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել է՝ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ 15-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն՝ լազերային տպիչ՝ HP/Samsung Xpress SL-M2020, կամ համարժեքը: Նախատեսված սև-սպիտակ տպագրության համար: Նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար: Տպելու արագություն՝ առնվազն 20 էջ/րոպե: Տպելու որակը բոլոր ռեժիմներում ոչ պակաս 1200x1200 dpi: Հիշողություն՝ 8 ՄԲ: Թղթի փոխանցումը՝ 150 թերթի սկուտեղ: Թղթի խտությունը՝ 60-163 գ/քառ. մ: Մալուխ USB 2.0 A-B, երաշխիքային ժամկետը առնվազն 365 օր:

24.07.2019թ.-ին Մասնակցի կողմից (սահմանված ժամկետում) ներկայացված շտկված 6.1 հավելվածի՝ 15-րդ չափաբաժնի ապրանքի համար առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ լազերային տպիչ (110Վ): Նախատեսված սև-սպիտակ տպագրության համար: Նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար: Տպելու արագություն' առնվազն 20 էջ/րոպե: Տպելու որակը բոլոր ռեժիմներում ոչ պակաս 1200x1200 dpi: Հիշողություն՝ 8 ՄԲ: Թղթի փոխանցումը' 150 թերթի սկուտեղ: Թղթի խտությունը' 60-163 գ/քւսռ. Մ: Մալուխ US8 2.0 A-B: Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127 Վ (+/-10%): Սնուցման աղբյուրի պահանջները՝ 50/60 Հg (+/-2Հg): Անվանական հոսանքը՝ 3,5 A: Երաշխիքային ժամկետը առնվազն 365 օր:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2019թ. թիվ 26/26-1/13375-2019 գրությամբ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ընդհանրապես չեն ներկայացվում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ապա տվյալ դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-

րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իր կարիքների համար համակարգչային պատճենահանման սարքերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏԱԼԿԿԳՎ-ԳՀԱՊՁԲ-2/19-ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներակայացրած «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 15.07.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ 15-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող ապրանքների ամբողջական նկարագրի հիմնավորող փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև 6 և 6.1 հավելվածների տեքստերում սխալ են նշված ծածկագրերը:

Նույն արձանագրությամբ, գնահատող հանձնաժողովն որոշել է ծանուցել «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված արձանագրված անհամապատասխանությունը:

24.07.2019թ.-ին Մասնակցի կողմից (սահմանված ժամկետում) ներկայացվել է շտկված 6 և 6.1 հավելվածները:

Հանձնաժողովի 25.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել է՝ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը, մասնավորպես՝ Մասնակցի կողմից ներկայացված 6.1 հավելվածի՝ 15-րդ չափաբաժնի ապրանքի համար առաջարկած *«Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127 Վ (+/-10%)»* ամբողջական նկարագիրը չշտկելու հիմքով:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ 15-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն՝

լազերային տպիչ՝ HP/Samsung Xpress SL-M2020, կամ համարժեքը: Նախատեսված սև-սպիտակ տպագրության համար: Նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար: Տպելու արագություն՝ առնվազն 20 էջ/րոպե: Տպելու որակը բոլոր ռեժիմներում ոչ պակաս 1200x1200 dpi: Հիշողություն՝ 8 ՄԲ: Թղթի փոխանցումը՝ 150 թերթի սկուտեղ: Թղթի խտությունը՝ 60-163 գ/քառ. մ: Մալուխ USB 2.0 A-B, երաշխիքային ժամկետը առնվազն 365 օր:

24.07.2019թ.-ին Մասնակցի կողմից (սահմանված ժամկետում) ներկայացված շտկված 6.1 հավելվածի՝ 15-րդ չափաբաժնի ապրանքի համար առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ լազերային տպիչ (110Վ): Նախատեսված սև-սպիտակ տպագրության համար: Նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար: Տպելու արագություն' առնվազն 20 էջ/րոպե: Տպելու որակը բոլոր ռեժիմներում ոչ պակաս 1200x1200 dpi: Հիշողություն՝ 8 ՄԲ: Թղթի փոխանցումը' 150 թերթի սկուտեղ: Թղթի խտությունը' 60-163 գ/քւսռ. Մ: Մալուխ US8 2.0 A-B: Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127 Վ (+/-10%): Սնուցման աղբյուրի պահանջները՝ 50/60 Հg (+/-2Հg): Անվանական հոսանքը՝ 3,5 A: Երաշխիքային ժամկետը առնվազն 365 օր:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» չափորոշիչը չի կարող հանդիսանալ հրավերով սահմանված պահանջներին անհապատասխանություն, քանի որ Հրավերում 15-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա չեն սարքի լարմանը վերաբերող պահանջներ:

Այլ կերպ ասած՝ անհամապատասխանություն կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ հրավերով հստակ նշված լիներ պահանջ, որին չէր համապատասխանի ներկայացված նկարագիրը: Սակայն սույն դեպքում, Հրավերով նախատեսված չի եղել սարքի համար նախատեսված լարման չափ, ուստի Մասնակցի կողմից ներկայացված «Սարքի համար նախատեսված լարումը՝ 100-127Վ (+/-10%)» չափորոշիչը չի կարող գնահատվել որպես հրավերի պահանջներին անհամապատասխանություն, հատկապես նաև այն դեպքում, երբ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված 15-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն՝ լազերային տպիչը չի կարող լինել առանց լարման և հատկապես այն դեպքում, երբ հակառակի մասին հրավերով նման պահանջ առկա չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվի, մասնակիցն էլ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցն առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը:

Տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերի 15-րդ

չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագերին, որպիսի պայմաններում Մասնակիցը չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2019թ. թիվ 26/26-1/13375-2019 գրությամբ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**